



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 18.04.2012թ. ԹԻՎ 1/351Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 11

ԿԵՂԾ ԵՎ ՇԻՆԾՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ (ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ)
ՄԻՋՈՑՈՎ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. Կիրառելիության շրջանակը.....	3
ԳԼՈՒԽ 2. Ընդհանուր դրույթներ	3
ԳԼՈՒԽ 3. Փողերի լվացման հնարավոր սխեմաների նկարագրությունը.....	6
ԳԼՈՒԽ 4. Եզրակացություններ	6

Գլուխ 1. Կիրառելիության շրջանակը

1. Սույն տիպաբանությամբ ներկայացվող գործիքների և գործարքների/ գործառնությունների տեսակների կիրառությամբ փողերի լվացման սխեմաները կարող են վերաբերել հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց.

- 1) բանկեր,
- 2) նոտարներ,
- 3) փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք,
- 4) իրավաբանական անձանց գրանցող պետական մարմին,
- 5) անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմին:

Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ

2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան հաճախորդների պատշաճ և հավելյալ ուսումնասիրություն իրականացնելիս հաշվետու անձինք իրավասու են հաճախորդներից պահանջել որոշակի տեղեկություններ և փաստաթղթեր՝ հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների ու գործարքների վերաբերյալ իրական ու ամբողջական պատկերացում կազմելու համար:

3. Այդ կապակցությամբ, հաճախորդներն իրենց (տնտեսական) գործունեության և գործարքների իրավաչափությունը հավաստելու նպատակով հաճախ ներկայացնում են որոշակի գործարքների վերաբերյալ պայմանագրեր, որոնց հիման վրա հաշվետու անձը վերլուծություններ կատարելու միջոցով պետք է գա եզրահանգման օրենքով, լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցերով և հաշվետու անձի ներքին իրավական ակտերով սահմանված կասկածելիության չափանիշների առկայության կամ բացակայության մասին:

4. Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հաճախորդների կողմից ներկայացված պայմանագրերն իրականում վերաբերում են կեղծ կամ շինծու գործարքների¹: Սույն տիպաբանության իմաստով, գործարքի կեղծ լինելը նշանակում է դրա՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված լինելը, իսկ շինծու լինելը վերաբերում է դրա՝

¹ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածը կեղծ և շինծու գործարքների անվավերությունը սահմանում է հետևյալ կերպ. «1. Կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետեւանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է: 2. Շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս»:

մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված լինելուն: Կեղծ և շինծու գործարքներին վերաբերող պայմանագրերի համար կարող են հատկանշական լինել հետևյալ բնութագրերը.

1) Կառուցվածքային անհամապատասխանություններ

- ա. Պայմանագրի կառուցվածքը՝ պայմանագիրն արտաքուստ ունի գործարար պրակտիկայում սովորաբար կիրառվող ստանդարտ կառուցվածք (համապատասխան բաժիններ, հողվածներ, մասեր), սակայն դրանց ներքո արտացոլված սակավաթիվ դրույթները տեղեկատվական առումով փոքրաթեք/ նվազ որոշիչ են.
- բ. Պայմանագրի շարադրանքը՝ պայմանագրի էական պայմանները, կողմերի իրավունքները և պարտականությունները, վեճերի լուծման կարգը սահմանված են խիստ ընդհանուր դրույթներով, և (նույն հաճախորդի կողմից ներկայացված) տարբեր կոնտրագենտների հետ կնքված մի քանի պայմանագրերի համեմատության դեպքում ակնհայտ է դրանց ռճաբանական նույնությունը.

2) Բովանդակային անհամապատասխանություններ

- ա. Պայմանագրի առարկան՝ պայմանագիրը կնքված է անորոշ կամ խիստ ընդհանուր ձևակերպումներով սահմանվող ֆինանսավորման, ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման նպատակով (օրինակ՝ անտոկոս կամ ցածր տոկոսադրույքով փոխառության տրամադրում, տեխնիկական միջոցների մատակարարում, խորհրդատվական ծառայությունների մատուցում և այլն).
- բ. Պայմանագրի արժեքը՝ պայմանագիրը կնքված է մեծ (մի քանի հարյուր հազարից մինչև մի քանի միլիոն ԱՄՆ դոլար, եվրո կամ այլ ազատ փոխարկելի արտարժույթ) գումարով (հաճախ դա որևէ «կլոր» գումար է).
- գ. Պայմանագրի գործողության ժամկետը՝ պայմանագրի համար սահմանված է գործողության երկար (մեկ կամ մի քանի տարի) ժամկետ, բացակայում են գործարար պրակտիկայում սովորաբար կիրառվող՝ տնտեսական գործունեության տարբեր բնագավառներին հատուկ ողջամիտ (նախա)պայմաններից բխող հստակ ժամկետները.
- դ. Պայմանագրի մանրամասները՝ պայմանագիրը չի պարունակում գործարար պրակտիկայում սովորաբար կարևորվող այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են, օրինակ, մատակարարվելիք ապրանքների կազմը, տեսականին, տեխնիկական բնութագրերը, մատակարարման (փոխանցման/ ընդունման) պայմանները և այլն.

3) Տրամաբանական անհամապատասխանություններ

- ա. Պայմանագրի կողմերը՝ պայմանագրի կողմերից մեկը (կամ երկուսը) օֆշորային երկրներում/ տարածքներում գրանցված իրավաբանական անձինք են, որոնց իրական շահառուների, գործունեության բնույթի, փաստացի տնտեսական ցուցանիշների վերաբերյալ արժանահավատ տեղեկատվությունը բացակայում է.
- բ. *Լիազորված անձինք*՝ միևնույն անձը հանդես է գալիս մի շարք ընկերությունների լիազորված անձի դերում և իրավասու է դրանց անունից ներկայացնել վճարման հանձնարարագրեր, կատարել կանխիկացումներ և դրամական հետևանքներ առաջացնող այլ գործողություններ.
- գ. *Ստորագրությունները*՝ (նույն հաճախորդի կողմից ներկայացված) տարբեր պայմանագրերի վրա առկա ստորագրությունները կառուցվածքով, ձեռագրով, կատարման որակով միմյանցից քիչ են տարբերվում.
- դ. *Կնիքները*՝ (նույն հաճախորդի կողմից ներկայացված) տարբեր պայմանագրերի վրա առկա կնիքները դիզայնով, թանաքի գույնով և այլն բնութագրիչներով միմյանցից քիչ են տարբերվում.
- ե. *Բնօրինակը*՝ հաճախորդը ներկայացնում է տարբեր միանման պայմանագրերի պատճեններ, սակայն դժվարանում կամ չի ցանկանում ներկայացնել բնօրինակները.

4) Տեխնիկական անհամապատասխանություններ

- ա. *Սխալները*՝ պայմանագրի կողմերի անունները/ անվանումները, կնքման ամսաթիվը, թվային և տառային արտահայտությամբ պայմանագրի գումարը լրացված են սխալներով, սխալ տեղերում, նույն «տիպային» օրինակի վրա մեծ թվով տարբեր պայմանագրեր «լրացնելու» ակնհայտ նշաններով.
- բ. *Բացթողումները*՝ լրացված պայմանագրերում միտումնավոր կամ անփութության պատճառով բաց են թողնված պայմանագրի էական պայմաններին վերաբերող հատվածներ, ստորագրություններ, կնիքներ.
- գ. *Թերությունները*՝ պայմանագրերը (հայերենով կամ որևէ օտար լեզվով, հիմնականում՝ անգլերենով) կազմված են ոչ գրագետ, տառասխալներով, շարադասական կամ իմաստային թերություններով.

Գլուխ 3. Փողերի վացման հնարավոր սխեմաների նկարագրությունը

5. Վերը նկարագրված (մեկ կամ մի քանի) բնութագրիչներին համապատասխանող պայմանագրերը կարող են կիրառվել տարատեսակ սխեմաներով փողերի լվացման նպատակով՝ ներկայացվելով որպես կատարված գործարքների իրավաչափությունը հավաստող/ հիմնավորող փաստաթուղթ, օրինակ.

- 1) Հայաստանից արտերկիր և հակառակ ուղղությամբ մեծածավալ փոխանցումների դեպքում (հաճախ՝ ստացված գումարը դուրս փոխանցելուց առաջ մեկ այլ արժույթի փոխարկելուց հետո).
- 2) Կանխիկ գումարների մեծածավալ մուտքագրումների և ելքագրումների դեպքում (հաճախ տրոհված՝ որոշակի սահմանաչափը չգերազանցող մի շարք գործարքների միջոցով).
- 3) Որևէ իրավաբանական անձի հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխկապակցված ֆիզիկական անձի կողմից իրավաբանական անձին փոխառությունների տրամադրման/ դրանց հետ ստացման գործարքների դեպքում.
- 4) Ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև մեծածավալ պարբերական փոխանցումների դեպքում (հաճախ՝ փողերի լվացման այս կամ այն սխեման «սպասարկելու» նպատակով այդ անձանց որոշակի տրամաբանությամբ «խմբավորելով»):

Գլուխ 4. Եզրակացություններ

6. Փողերի լվացման հնարավոր սխեմաների առկայության վերաբերյալ եզրահանգման գալու նպատակով, հաշվետվություն տրամադրող անձինք պետք է ուշադրություն դարձնեն այդ սխեմաների հայտնաբերման տեսանկյունից էական այնպիսի բնութագրերի, ինչպիսիք են.

- 1) գործարքի տնտեսագիտական կամ տրամաբանական հիմնավորումը հավաստող փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլն) կառուցվածքային, բովանդակային, տրամաբանական և տեխնիկական տեսանկյունից ամբողջականությունը, արժանահավատությանը, տվյալ ոլորտի գործարար պրակտիկային համապատասխանությունը.
- 2) հաճախորդի կողմից իրականացվող գործարքների/ գործունեության համապատասխանությունը նրա գործարար կերպարին, նախկինում հայտարարագրված ու փաստացի իրագործվող բիզնես-նպատակներին.
- 3) հաճախորդի կողմից իրականացվող գործարքներում/ գործառնություններում օֆշորային կամ այլ ռիսկային գոտիներում գտնվող ֆինանսական հաստատությունների/ ընկերությունների ներգրավվածությունը: